**Արձանագրություն N 3**
**ՀՀՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (Armeps) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք.Երևան

24 հոկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 17:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տ. Ավանեսյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Մ. Մելիքսեթյան |
| | Ա. Հովհաննիսյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Լ. Ղազարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Այվազյան |

1. **Հանձնաժողովի նիստի օրակարգը**
(Տ. Ավանեսյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԳՀԾՁԲ-25/18** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0***

2. **ՀՀՀ-ԳՀԾՁԲ-25/18 ծածկագրով հայտերի բացման մասին**
(Տ. Ավանեսյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| | | |
|---|---|---|
| 1 | Աննա Սահակյան ԱՁ | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ, Ֆանարջյան 37. Հեռ. +374 77 44 77 54, atsgnumner@gmail.com |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0***

3. **Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին**
(Տ. Ավանեսյան)

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են:

Մասնակցի կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ Հավելված 2.1-ի ապրանքի միավորի գների հանրագումարը չի համապատասխանում հավելված 2-ում ներկայացված ընդհանուր գնին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0 :***

4. **Անհամապատասխանությունները շտկելու մասին**
(Տ. Ավանեսյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանության մասին ծանուցել Աննա Սահակյան ԱՁ-ին:

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 28.10.2025թ. ժամը 16:00 ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## 5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

**(Տ. Ավանեսյան)**

**ՀՀՀ-ԳՀԾՁԲ-25/18** ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2025 թվականի հոկտեմբերի 28-ին ժամը 16:00-ին ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0***

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Տ. Ավանեսյան |
| գնահատող անդամներ՝ | Մ. Մելիքսեթյան |
| | Ա. Հովհաննիսյան |
| բացող անդամներ՝ | Ղ. Ղազարյան |
| քարտուղար՝ | Ա. Այվազյան |